ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

Ք. Երևան

27.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/18

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Սասունասար» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի և Ա. Ստեփանյանի (լիազորագիր տրված՝ 12.01.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ՝ Վ. Մեժունցի (լիազորագիր տրված՝ 12.01.2019թ.)

Քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից 08.02.2019թ. ներկայացված և 11.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/18 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **«Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Սասունասար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 08.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սասունասար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է հետևյալ հիմնավորմամբ. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սասունասար» ՍՊԸ-ն 19.04.2018թ. մինչև 19.04.2020թ. ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և հրավերի 2.1 կետի 6-րդ ենթակետի պահանջները, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 92-րդ կետով՝ որոշեց «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշման համաձայն որոշվել է՝ «Սասունասար» ՍՊԸ-ին երկու տարի ժամկետով ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/9099/02/18/ քաղաքացիական գործով 04.06.2018թ. կայացրած «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ (կցվում է) որոշել է. «Հայցվորի կողմից հայցադիմումով ներկայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարել: Հայցի ապահովման նպատակով կասեցնել «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների

բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը՝ մինչև սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը: Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, ենթակա չէ բողոքարկման և ենթակա է անհապաղ կատարման»:

«Սասունասար» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 06.02.2019թ. էլեկտրոնային եղանակով ուղղված գրությամբ (արտատպումը կցվում է) Ընկերությունը հայտնել է հետևյալը. «Տեղեկանալով «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշման մասին՝ հայտնում ենք, որ ԵԴ/9099/02/18 գործի շրջանակներում 04.06.2018թ.-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած իրավապարտադիր որոշմամբ արդեն իսկ Դատարանը կասեցրել է «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի /ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի/ 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը /հայցի ապահովումը կցվում է/:

Ելնելով վերոգրյալից՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին Ընկերությունը խնդրել է վերանայել «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը»:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատական ակտի և դատարանի պահանջների չկատարումը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

Ընկերությունը հայտնել է, որ «Սասունասար» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի /ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի/կողմից 13.04.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշմամբ:

Ընկերությունը հայտնել է, որ վերոնշված թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել է դատական կարգով՝ հայց ներկայացնելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան /քաղաքացիական գործ թիվ ԵԴ/9099/02/18/, որին կից ներկայացվել է հայցի հետևյալ պահանջով հայցի ապահովման միջնորդություն. <<Կասեցնել «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը ...:

Նշված հայցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.06.2018թ. և Դատարանը որոշել է՝ կասեցնել «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը՝ մինչև սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Նույն որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը ամրագրել է, որ որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, ենթակա չէ բողոքարկման և ենթակա է անհապաղ կատարման:

Ընկերությունը հայտնել է, որ ստացվում է մի իրավիճակ, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 04.06.2018թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը՝ մինչև սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը, սակայն գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Դատարանի կողմից արդեն իսկ կասեցված (փաստացիորեն արդեն չգործող) որոշումը՝ մերժել Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, թե «Սասունասար» ՍՊԸ-ն 19.04.2018թ. մինչև 19.04.2020թ. ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը հայտնել է, որ եթե Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 04.06.2018թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը՝ մինչև սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը, ուստի դրանով իսկ մինչև թիվ ԵԴ/9099/02/18 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը կասեցվել է, իրավաբանակ ուժ չունի «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը:

Հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/9099/02 քաղաքացիական գործով 04.06.2018թ.կայացրած որոշման պայմաններում «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջների խախտում: Վերոհիշյալը ոչ իրավաչափորեն հանգեցրել է «Սասունասար» ՍՊԸ-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացման սահմանափակմանը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ թիվ ԵԴ/9099/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած իրավապարտադիր որոշմամբ արդեն իսկ

Դատարանը կասեցրել է «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը /ԴԱՀԿ կատարողական վարույթ հարուցելու որոշումը կցվում է/, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մինչ օրս պաշտոնական տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Սասունասար» ՍՊԸ-ի անվան դիմաց չի կատարել համապատասխան նշում:

Այնինչ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Զարգարյանի կողմից 04.06.2018թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից, ենթակա չէ բողոքարկման և ենթակա է անհապաղ կատարման:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելել ու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու 04.02.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.02.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

Երևանի քաղաքապետարանը պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.02.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սասունասար» ՍՊԸ-ն: Սակայն մրցույթի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հրավերի 2.1 կետի 6-րդ ենթակետի պահանջներով, մերժել է «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ «Սասունասար» ՍՊԸ-ն 19.04.2018թ. մինչև 19.04.2020թ. ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

<u>3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ԱՄ-2019/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքում բազմաբնակարան շենքրի պատշգամբների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Սասունասար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.02.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սասունասար» ՍՊԸ-ն 19.04.2018թ. մինչև 19.04.2020թ. ներառված

է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և հրավերի 2.1 կետի 6-րդ ենթակետի պահանջները, ուստի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 92-րդ կետով՝ որոշեց «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժել:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Սասունասար» ՍՊԸ-ի 08.02.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ; հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց

հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Օրենք 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Սասունասար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.02.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սասունասար» ՍՊԸ-ն 19.04.2018թ. մինչև 19.04.2020թ. ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և հրավերի 2.1 կետի 6-րդ ենթակետի պահանջները, ուստի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 92-րդ կետով, որոշեց «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Սասունասար» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը, համաձայն որի Ընկերությունը ներառվել էր Ցուցակում, «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել է դատական կարգով՝ հայց ներկայացնելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի շրջանակներում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/9099/02/18/ քաղաքացիական գործով 04.06.2018թ. կայացրած «Հայցի

ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ որոշվել է. «Հայցվորի կողմից հայցադիմումով ներկայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարել և հայցի ապահովման նպատակով կասեցնել «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը՝ մինչև սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Արձանագրում եմ, որ «Սասունասար» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 13.04.2018թ. կայացված թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշմամբ, որի հիման վրա լիազոր մարմինը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սասունասար» ՍՊԸ-ին 2 տարի ժամկետով՝ 19.04.2018թ. մինչև 19.04.2020թ., ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ), որի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ արձանագրում եմ, որ 19.04.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Սասունասար» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելուց հետո նոր միայն Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/9099/02/18/ քաղաքացիական գործով 04.06.2018թ. կայացրած «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ որոշվել է. ***«Հայցվորի կողմից հայցադիմումով ներկայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարել և հայցի ապահովման նպատակով կասեցնել «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 13.04.2018թ. թիվ ՍՑ-ԷՍ-2018/34 որոշումը և արգելել ՀՀ գնումների ոլորտում բողոքներ քննող անձ՝ Էմիլ Գալստյանին, որոշումը պաշտոնական տեղեկագրում հրապարակել, մինչև սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը»***, մինչդեռ արձանագրում եմ, որ Օրենքի 6-րդ հոդվածի

2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ***ցուցակը***, այդ թվում՝ ռուսերեն, ***հրապարակում է լիազորված մարմինը***:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև ***դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար*** և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Վերը նշված հոդվածը հստակ սահմանում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար: Եվ այս կապակցությամբ ի պատասխան «Սասունասար» ՍՊԸ-ի 16.07.2018թ. գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 31.07.2018թ. «Սասունասար» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ դատարանի վերը նշված որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարության վրա նման պարտավորություն չի դրվել, ուստի չհանդիսանալով հասցեատեր, չի կարող ապահովել նման որոշման պահանջների կատարումը:

Ընդ որում արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության վերը նշված գրությունը ստանալուց հետո այլ միջոցներ չեն ձեռնարկվել սույն հարցի հետ կապված: Փաստացի, Ընկերությունը իրազեկվել է, որ հայցի ապահովման որոշումը որևէ հետևանք չի առաջացրել Ընկերության գնումներին մասնակցության իրավունքի վերականգնման առումով:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 2.1 կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ ***սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սասունասար» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ուստի նման փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով gnumner.am պաշտոնական կայքում առկա տեղեկատվությամբ, հայտերի բացման նիստում 04.02.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ մերժելով «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սասունասար» ՍՊԸ-ի կողմից 08.02.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**